№ 3 ՄԱՐՏ 1895

ԴՐՕՇԱԿ

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ“ ՕՐԳԱՆ

ԶԷՆՔ

Մարտ, 1895 թ.

Տաճկահայ ժողովրդին ընդհանուր կոտորածի սարսափ է սպառնում. ամեն մի բոպէ նա երկիւղով սպասում է տաճիկ ժողովրդի յարձակման, իսկ վերջինն էլ իւր կողմից չի զլանում սպառնալիքներ տալ։ Երկու միատեղ ապրող ժողովրդների յարաբերութիւնը լարած է։ Սա փաստ է և հետևանք ներկայ իրերի դրութեան։ Հայ ժողովրդի երկիւղը անհիմն չէ և ահա ինչու։

Ով ճանաչում է արևելքը, ով գիտէ մահմեդական ժողովուրդը, նա շատ լաւ գիտէ՝ թէ կրօնը, նոյն իսկ մեր օրերում, ինչ դեր է կատարել նորա կեանքում, թէ հոգևորականութիւնը ու ազնվականութիւնը որքան մեծ ոյժ ու ազդեցութիւն ունեն այդ ժողովրդի վրայ շնորհիւ այն հանգամանքի, որ սրա տընտեսական և մտաւոր կեանքը նրանց ձեռքին է և թէ սա որքան կոյր և մոլեռանդ է։

Տաճիկ ժողովուրդը շնորհիւ այս երկու դասակարգերի, շնորհիւ տիրող պայմանների ապրում է անգիտակցական կեանքով։ Եւ անգիտակցորէն ապրող ժողովուրդը ինչ՞ը ասես որ չի անել առանց իրեն հաշիւ տալու, առանց մտածելու, որ իւր այդ գործողութիւնը՝ հայերի վրայ յարձակում գործելը, թշնամաբար վերաբերիլը դէպի ուրիշ ժողովուրդները և այլն, յոգուտ իրեն չէ, որ ինքն ևս դորանից վնասւում է. անգիտակցորէն ապրող ժողովուրդը որտեղից կարող է իմանալ, թէ նա կոյր գործիք է դառել այդ անբարոյական, ճահճի մէջ ապրող դասակարգերի ձեռքին, նա ինչպէ՞ս կը հասկանայ, որ ինքը ծառայում է նրանց շահերին, որ նրանք դրան թելադրում են կատարել ամենավատ գործեր իրենց շահերի համար, կրօնի անունով, նորա դիմակի տակ ծածկւած, միշտ իրենց աջակից ու մասնակից ունենալով սուլթանի կառավարութիւնը։ Որտեղից իմանայ, ո՞վ է նրան հասկացրել.... ովքե՞ր են նրա հասարակական գործիչները։

Շատ քիչ բացառութեամբ նա որը է. նա ունի մի քանի հատ խելք, մտածող ու բարեսիրտ անհատներ ու թոյլ ուժերով „երիտասարդ Թուրքիան“. ահա նրա սրտացաւ բարեկամները, ահա յոգուտ նրա շահերի գործիչները։ Մինչդեռ հասարակական և քաղաքական բոլոր ասպարէզները, շուկաները բռնել է այդ երրորդութիւնը— կառավարութիւնը, մոլլան և ազնվականը իրենց արբանեակներով՝ ամենահարուստ, անսիրտ կեղեքողից մինչև անպատկառ զապթիան։ Ներկայումս սրանք են նրա հասարակական գործիչները, նրա ուսուցիչները ու դաստիարակները։ Ի՞նչ կարելի է սպասել։

Բայց երախտամոռ չլինենք դէպի երրորդութիւնը. նա իրրև կրթիչ տաճիկ ժողովրդին շա՞տ բան է ասել, հասկացրել.— նրա մէջ սնուցել է ատելութիւն, զզուանք դէպի հարևան ոչ-կրօնակից ժողովրդները, որոնց նա „մուռտար“, „անմաքուր“ է համարում, նրան դրդրդել է անպատուել, ծաղրել, բռնաբարել, սպանել, թալանել նրանց. նրան սովորեցրել, վարժեցրել է ապրել նրանց հաշուով, նրանց աշխատանքը, բերանի հացը խլել. նրան տուել է ամեն տեսակ անբարոյական և ստոր դասեր և այդ տեսակ գործունէութեան համար ամենաազատ ասպարէզ և հովանաւորութիւն։

Ինչո՞ւ համար, ի՞նչ նպատակով։

Թէ ձրիակեր կառավարութիւնը, թէ իւր մծտիկ ձրիակեր խնամիները— հոգևորականութիւնն և ազնվականութիւնը ապրում են, թէև չեն աշխատում և դրանց ապրեցնողը, գոյութիւնը պահպանողն իւր դառն աշխատանքով թէ այդ ողորմելի, կոյր և գիտակցութիւնից զուրկ թուրք ժողովուրդն է և թէ երկրում ապրող միւս ժողովուրդները։ Հասկանալի է, որ նրանց երբէք ցանկալի չէ ոչ „իրենց ժողովրդի“ յառաջադիմութիւնը և ոչ էլ մի որ և է փոփոխութիւն երկրում, որը կարող է յառաջ բերել յառաջադիմութիւն, քաղաքակրթութիւն, որի հետ կապւած է ժողովրդի գիտակցութիւնը, նրա ազատուելն այն կապանքներից, որոնց բանալին իրենց ձեռքին է։ Հենց այս պատճառով էլ նրանք ճիգ են թափում, գործ են դնում ամեն միջոց պահպանելու իրերի ներկայ դրութիւնը, պահելու տաճիկ

գամը չէ, որ դրանք գբաղում են նրա վիճակով, բայց յուրեան համար անհրաժեշտ պայմաններ են, որոնցից

ժողովրդին նոյն տգիտութեան, նոյն մոլեռանդութեան մէջ, լարելու նրա յարաբերութիւնը հարևան ժողովրդների հետ, նամանաւանդ հայ ժողովրդի, որ այսօր երկրի յառաջադէմ, յեղափոխական ժողովուրդն է, որի վրայ է ընկել կատարել պատմական մեծ դեր՝ յեղափոխելու երկրում ներկայումս տիրող պայմանները և յառաջ բերել այնպիսի մի նոր դրութիւն, նոր պայմաններ, ուր այլևս այդ շառլատանները ու պորտաբոյծները չեն կարող այնպէս ազատ, լայն ու անպատիժ կերպով շարունակել իրենց ձրիակերութիւնը, կեղեքումները և այլն, ուր նրանց հեղինակութիւնն և ազդեցութիւնը կընկնի, կը ոչընչանայ, ուր նրանք այլ ևս չեն կարող լինել իշխողը, կառավարողը, ուր կը տիրէ ազգերի համերաշխութիւն, որի հետևանքը կը լինի այդ տգրուկների համար տնտեսական տեսակէտից այն, որ իրենք ևս կը պարտաւորուեն աշխատել իրենց գոյութիւնը պահպանելու, քաղաքացիական տեսակէտից- իրաւունքների հաւասարութիւն, իսկ կառավարչական ներկայ սիստէմը բոլորովին կը ոչնչանայ, հիմնովին կը կործանուի։ Այս կը լինի ներկայ իրերի փոփոխութեան լոգիկական հետևանքը, որը յառաջ կը բերուի Հայաստանում սպասելիք և արդէն սկսած յեղափոխութեամբ։

Արդե՞օք երկրի այս տեսակ փոփոխութիւնը ցանկալի, հաճելի կը լինի ինչպէս սուլթանի աւազակ կառավարութեան, այնպէս էլ շառլատան իր խնամիներին։ Պարզ է, որ ո՛չ. հետևապէս դիւրին է հասկանալ, թէ ինչու համար, ինչ նպատակով են դրանք գրգռում մահմեդական տարրին ոչ-մահմեդականների դէմ։ Հասկանալի է նոյնպէս, որ այդ չարագործների խումբը իւր ունեցած ուժով պիտի աշխատի արգելք լինել բոլոր այն շարժումներին, որ սպառնում են վերջ տալ իրերի ներկայ դրութեան, ոչնչացնել այն, ինչ որ սպառնում է ոչնչացնել իրենց թագաւորութիւնը։ Եւ որովհետև այդ սպառնացողը ներկայումս հայ ժողովուրդն է, բնական է, որ նրանք իրենց նիզակները պիտի ուղղեն դէպի նրան, և հենց այդպէս էլ անում են։ Պարզապէս տեսնելով իրենց հասանելիք վտանգը, նրանք էլ իրենց կողմից գործ են դնում իրենց ունեցած միջոցները և ոյժը, ոչնչացնելու վտանգ սպառնացող տարրին „չարիքը արմատից չորացնելու“ և, իբրև միակ միջոց, նա ընտրել է կոտորածը, որովհետև երկար տարիների խուլ, ծուռ ու մուռ ճանապարհներով կուռելը նպատակին չհասցրեց։ Իսկ տաճիկ կոյր և մոլեռանդ ժողովուրդը այդտեղ ծառայում է այդ իժի ծնունդներին, իբրև միջոց իրենց չարանենգ նպատակին հասնելու համար։ Սա գոյութեան կռիւ է. բնական է, որ այդպիսի արարածները կը կորցնեն ամեն խելացիութիւն, ի հարկէ եթէ ունեն, և իբրև խելագար կը դիմեն ամեն բանի. ջրում խեղդուողը ձեղից էլ կը բռնի։ Բացի այս, գոյութեան կռուում, մանաւանդ այդպիսիները, միջոցների ընտրութեան մէջ ոչ մի խտրութիւն չեն դնում և հետևանքի մասին երկիւղ էլ չեն կրում։ „Ինչ կը լինի, թող լինի“ այս է այդ թշուառականների լոգիկան, միայն թէ ազատուեն այդ վտանգաւոր տարրից, որպէսզի կարողանան տաճիկ, քիւրդ և միւս ժողովուրդների կրծքին նստած, հանգիստ շարունակել իրենց անամօթ գոյութիւնը։ Բացի այն, որ երրորդութիւնը գոյութեան կռիւ է մղում, բացի այն, որ կռիւը սկսած է և հայ ժողովուրդը եռանդով յառաջ է տանում յեղափոխական շարժումը, բացի այն որ նա իր դէմ է գրգռել Եւրոպայի, Ամերիկայի, Հնդկաստանի ժողովուրդները, իսկ մինչդեռ հայ ժողովուրդը նրանց մէջ համակրութիւն է ձեռք բերել, նա մինչև իսկ իր դէմ ունի և մի որոշ տարր մահմեդական աշխարհից։ Իրերի այդ տեսակ դասաւորութիւնը յօգուտ երրորդութեան չի կարող լինել և նա պարզապէս տեսնում է, որ հեռու չէ այն օրը, երբ վերջ պիտի դնուի իր անսանձ ու անբարոյական թագաւորութեան։ Բնական է, որ նա էլ իր կողմից պիտի աշխատի դէմ դնել այդ վտանգին իւր ունեցած միջոցներով և որովհետև, ինչպէս ասացինք, միակ միջոցը ներկայումս, որ ունեն իրենց տրամադրութեան տակ, կոտորածն է, նա էլ դրան կը դիմի։ Նոյնը ասում է և եւրոպական մամուլը։

Այսպէս լինելուց յետոյ, չենք կարծում, որ կարելի է կասկածել թէ այդ լիրբ պորտաբոյծները հրաժարուեն ի կատար ածել իրենց պրօէկտը։ Եւ որովհետև տաճիկ ժողովուրդը գտնուում է դրանց ազդեցութեան տակ, նրանց կոյր գործիքն է, ամենայն հաւակնութիւն կայ, որ նա մի այդպիսի քայլ կանի։ Հենց այս հիման վրայ է, որ մենք ասում ենք — հայ ժողովրդին ընդհանուր կոտորածի սարսափ է սպառնում, նա երկիւղով է սպասում տաճիկ ժողովրդի յարձակման և այս երկիւղը անհիմն չէ։

Ի՞նչ պէտք է անել։

Վտանգը կայ, նա ունի իր հիմունքը, նա հաւանական է։ Արդեօք թողնենք ճակատագրին, լաւատես լինենք և ասենք՝ չէ՛, այդպիսի բան չի լինիլ ու ձեռներս ծալենք, նստենք, մինչև որ սարսափը աչքներովս տեսնենք, մինչև որ ամբողջ երկիրը Սասունի վիճակին ընկնի— աւերակներով ու դիակներով ծածկի։ Էլ այն ժամանակ ի՞նչ է մնում անել. — լալ և կրճտել ատամները...

Ո՛չ, վտանգը կայ և պիտի պատրաստուել դիմադրելու. պիտի, անհրաժեշտ է դիմել պաշտպանութեան. ո՛չ ճակատագիր, ո՛չ լաւատեսութիւն։ Տաճկահայ բազմա-

չարչար ժողովրդի կեանքը ցոյց է տուել, որ այդ անիծեալ երկրում ամեն բան հնարաւոր է, ամեն բան սպասելու է։ Հետևապէս պիտի դիմել ամենաեռանդուն միջոցների, ժամանակ չպէտք է կորցնել, իւրաքանչիւր վարկեան թանգ է. այլապէս կը տուժենք և խիստ կերպով կը տուժենք, մնալով բարոյական ծանր պատասխանատուութեան տակ։ Պէտք է օգնել, և իբրև միջոց՝ ժողովրդի զինելն է, որի անհրաժեշտութիւնը վաղուց զգացուած է։ „Դաշնակցութիւնը“ իր կողմից, հենց իր գոյութեան առաջին օրերում, առանձին ուշադրութիւն է դարձրել դրա վրայ, չի զլացել և ոչինչ չէ խնայել այդ պահանջին բաւականութիւն տալու։ Բայց դրա մասին մի այլ անգամ։

Միայն մեզ հարկաւոր է աւելացնել այստեղ, որ ասելով, թէ անհրաժեշտ է զինել հայ ժողովրդին, չը պէտք է երբէք կարծել, որ մենք դրանով կռիւ ենք յայտնում տաճիկ ժողովրդին, ոչ։ Հենց նոյն իսկ նախընթաց համարում ասել ենք՝ հայ ժողովրդի բուն թշնամին տաճիկ և քիւրդ ժողովուրդը չէ. բացի այս, մենք միշտ ասել ու շեշտել ենք, թէ ժողովուրդները, աշխատաւորները մէկ-մէկու բնածին թշնամիներ չեն, որ ժողովրդի իսկական, բուն թշնամին ներկայ կառավարութիւնն է և իւր խնամիները, արքանեակները ու գեադաները։ Ընդհակառակը, „Դաշնակցութիւնը“ աշխատել է, որքան ներում են պայմանները, ձեռք բերել հայ ժողովրդի հետ միատեղ ապրող միւս ժողովրդների համակրութիւնն ու աջակցութիւնը։

Հայ ժողովրդին զինելու գլխաւոր ու անմիջական նպատակն է, որ նա հնարաւորութիւն ունենայ կռուելու ներկայ կառավարչական բէժիմի դէմ՝ իւր մարդկային իրաւունքները ձեռք բերելու համար։ Նա զինուած լինելով, միևնոյն ժամանակ միջոց կունենայ իրեն պաշտպանելու, երբ նրա վրայ յարձակում կը գործեն՝ սպանելու, թալանելու, բռնաբարելու... ով որ էլ լինի յարձակողը։ Ներկայ պայմաններում հայ ժողովրդին հարկաւոր է զէնք համ ինքնապաշտպանութեան համար, համ էլ թշնամու դէմ կռուելու համար։

Հայ ժողովուրդ, տաճկահայ եղբօրդ զէնք է հարկաւոր, զէնք, նրա փրկութիւնը ներկայ ծանր րոպէում դրանում է կայանում և նա ուրիշ ոչինչ չէ ուզում քեզնից։ Այդ ժողովուրդը, որ դեռ երեկ ձեռք էր պարզում միայն մի կտոր հաց խնդրելու համար և վախենում էր մի դանակ պահել, այսօր նա այլ ևս ձեռք չէ պարզում միայն հացի համար, (այդ էլ են խլում) իր թշուառ գոյութիւնը պահպանելու, նա զէնք է ուզում. նա, որ երեկ վախենում էր դանակ պահելուց, այսօր էլ չի վախենում ունենալ հրացան և թշնամու դէմ դուրս գալ։ Նրան զէնք է հարկաւոր ինքնապաշտպանութեան համար, դէմ դնելու իրեն սպառնացող սարսափին, նրան զէնք է հարկաւոր սկսածը շարունակելու-կռուելու իւր ազատութեան համար։

Ազատութիւն ձեռք բերելու միջոցը զէնքն է, արիւնն է. ժողովուրդը չի վախենում, նա արիւն է տալիս, տուր զէնք։

ՆԱՄԱԿ ԲԱՂԷՇԻՑ

Կառավարչական պաշտօնեաները՝ նահանգական փաշաները, գայմագամները և այլն, նոր պաշտօն ստանձնած ատեն իրենց „պարտաւորութիւնները“ ճշտիւ կատարելու՝ խեղճ ժողովուրդը թալանելու, հարստահարելու, կեղեքելու համար միշտ կը փնտրեն ժողովրդի միջէն ճարպիկ, ոչ մի սրբութիւն չճանչցող էակներ և ատոնց իրենց օգնական, խորհրդատու կընտրեն։ Այդ օգնականներն են, որ կը փնտրեն ամեն տեղ յաջող որս, կը լրտեսեն ամեն ինչ, կաշխատեն իրենց պետի դիրքն հաստատ պահելու. մի խօսքով՝ այդ ստոր, քսու անձինքն են, որ կը կազմեն երկրի մեծ չարիքներէն մինը։ Այդ գոյնի արարածներուն կը պատկաներ և Խաչիկ Բախալեանը, որ Սասնոյ կոտորածի հերոս հրեշ Թահսին փաշայի աջ բազուկն էր։ Ամեն տեսակ կեղեքումներ, յափշտակութիւններ, հարստահարութիւններ և բանտարկութիւններ Թահսին ճիւաղը կը կատարէր մատնիչ Խաչիկի միջոցաւ։ Թահսին, ի վարձատրութիւն իր հաւատարիմ ծառայութեան, դաւաճան Խաչիկին նշանակեց բանտարկուած Կակոսեանի տեղ դատարանի անդամ։ Բախալեան չկրցաւ երկար վայելել իր այդ նոր պաշտօնը. նա շուտով մահի դատապարտուեցաւ տեղական Դաշնակցական կոմիտէի որոշմամբ իր բազում անխոստովանելի մեղաց, մատնութեանց և լրտեսութեանց համար և մահուան պատիժը գործադրուեցաւ ամենայն յաջողութեամբ։

Մենք սխալմամբ գրած էինք մեր անցեալ թղթակցութեան մէջ, թէ գազան Թահսին Բիթլիսէն և Վիլայէթէն կորզած է այլ և այլ միջոցներով 8500 ոսկի, որ պէտք լինէր 28500, և այս բոլոր կեղեքումները կատարուած են մատնիչ դաւաճան Խաչիկի և ընկերներու ձեռամբ։

Սասնոյ կոտորածէն ետքը, երբ այս զարհուրելի կոտորածի մասին եւրոպական մամուլը բազմաթիւ յօդուածներով յուզեց ամբողջ եւրոպական հասարակութիւնները և զայրոյթ առաջ բերաւ ու գազան սուլթանը իր փչրուած գահոյկի վրայ, սասանեցաւ անմիջապէս հեռագրուեցաւ Թահսինին, որ Բիթլիսի երևելիներու ստորագրութեամբ հերքին եւրոպական հրատարակութիւնները, հաստատուին Բիթլիսի, Մուշի, Սասնոյ մէջ տիրող անդորրութիւնն, խաղաղութիւնը և վայելած անդորրութեան համար հաւատարմութեան ու շնորհակալութեան ուղերձներ մատուցանեն սուլթանին

գամը չէ, որ դրանք զբաղուում են նրա վիճակով, բայց յուլթեան համար անհրաժեշտ պայմանները են, որովհետ-

փշրած կայսրական գահոյից առջև։ Թահսինը երբ Բիթլիսի մէջ ձեռնարկեց մատնիչ Խաչիկի և ընկերներու հետ յիշեալ հանրագրութեան ուղերձի պատրաստութեան, հանդիպեց սաստիկ հանդիմանութեան։ Ոչ միայն Բիթլիսի հայ երևելի վաճառականքը անվախ և յամարձակ կերպով մերժեցին իրենց ստորագրութիւնը դնել թուրքական յայտնի ոճով կազմուած հանրագրական թուղթին, այլ և բողոքեցին նոյն իսկ թուրքական դատարաններու անաւանական հայ դատաւորները, և հետևելով միւս հայ երևելիներուն իրենք ալ չստորագրեցան։ Հրէշ Թահսին կատաղած, փրփրած այս համարձակ հանդուգն դիմադրութենէն, սկսաւ աջ ու ձախ սպառնալիքներ արձակել, որ եթէ չստորագրեն, բոլորին բանտերու մէջ շղթայակապ կը փտեցուցէ, տուներնին աւարի կը տայ և ընտանիքնին մեծով-պստկով աքսոր կուղարկի և այլն։ Թահսին արդէն իմացած էր իր լրտեսներու և լրտեսապետ Խաչիկի միջոցով, որ յիշեալ անձերը Բ. Դուռը իմացուցած, բողոքած են իր կեղեքումներու դէմ և առիթի մը կսպասէր իր թոյնը, իր կատաղութիւնը թափել յիշեալ երևելիներու վրայ։ Օգուտ քաղելով այս առիթէն, ճիւաղ Թահսին վերջապէս յայտնեց, որ շատ լաւ յայտնի են Բ. Դուռը իրեն դէմ ըրած բողոքները և եթէ կուզեն ապրել, իրենց ընտանիքները փրկել և ներողութեան արժանանալ, իրենց միայն մէկ միջոց կայ, այն է՝ առանց այլեւայլութեան ստորագրել հանրագրութեան թղթի տակ։ Երևելիները, Թահսինին բոլորովին անսպասելի յանդգնութեամբ, նորէն մերժեցին ստորագրութեան թղթի տակ իրենց ստորագրութիւնը դնել։ Այս մերժման վրայ Թահսին բոլորովին դիւահարած՝ սկսաւ անլուր հայհոյանքներ տեղալ հայոց ազգի, կրօնի, հաւատքի, ընտանիքի դէմ և ապա հրամայեց բոլորին բանտարկել։ Եւ ցարդ Բիթլիսի բանտի մէջ Թահսինի հրամանով բանտարկուած են Բիթլիսի բոլոր հայ երևելիները։ Հայ ժողովուրդը քաջալերուած երևելիներու ցուցած դիմադրութեամբ, ինքն ևս մերժեց ստորագրել, որով Թահսին հրէշն ամօթահար և յուսահատած հանրագրական ձեռնարկէն ետ կայնեցաւ, փոխեց իր թուրքական դիւանագիտութիւնը և սկսաւ քաղցրութեամբ համոզել, բայց նորէն չյաջողեցաւ և խայտառակուեցաւ, որովհետև բանտարկեալները նոյն համարձակութեամբ դարձեալ մերժեցին և իրենց որոշման վրայ հաստատ մնացին։

Բիթլիսի և շրջակայից հայոց վիճակը կատարելապէս դժոխք է։ Ամեն վարկեան կը վախցի, որ թուրք զօրքը և ամբոխը միացած կառավարութեան պաշտօնեաներու, համիդիէ հեծելագնդի հետ կը յարձակին և կը կոտորին հայերուս։ Թուրք խուժանի կատաղութիւնը գրգռումը, շնորհիւ կառավարութեան, իւր կատաթնակէտին հասած է։ Առևտուրը կատարելապէս դադրած է։ Ամենուրեք կատարեալ ահ և սարսափ տիրած է։ Քաղաքի և գիւղերու միջև յարաբերութիւնը բոլորովին դադրած է. յարաբերութիւնը դադրած է և գիւղերու միջև։ Ամբողջ Բիթլիսի, Մուշի վիլայեթի մէջ կը թագաւորէ դառն աղքատութիւն և թշուառութիւն։ Մուրացիքները անթիւ են։ Անօթութենէն և ցուրտէն մեռնողները պակաս չեն ըլլար։ Հայն օր ա. ւուր կը նուազի։ Արդէն երկրի մէջ ստակ ալ չի գտնուիր, որովհետև եղած չեղածը Թահսինը և մէկալ կառավարական կաշառակեր և կեղեքիչ պաշտօնեաները յափշտակեցին, թալանեցին, դառն աղքատութեան դուռը հասցրին ամբողջ ժողովուրդը... այս անողորմ, անօրէն կեղեքիչները վամպիրի նման ծծեցին, քամեցին հայերուն մինչև վերջին աստիճան և անտեսապէս սպառեցին, սպանեցին, կործանեցին ամբողջ հայութիւնը։

* * *

ՆԱՄԱԿ ՏՐԱՊԻԶՈՆԻՑ

Նոյեմբերի վերջերը կառավարութեան կողմանէ լուր ղրկեցաւ հայոց առաջնորդարան, թէ բարձրագոյն հրաման ըլլալով հայերու վրայ խիստ հսկողութիւն գործ դնել, կը ծանուցուի հայերու, որ տներու մէջ միւզիք երգ չերգեն, գիշերները ինչ առիթով կուզէ թող ըլլայ, ոևէ հաւաքում չունենան։ Այսքանը առանց քաշուելու կուսակալը հրաման կընէ. ո՛վ գիտէ վեհ. սուլթանէն, ի՞նչ „հայրախնամ“ գաղտնի պատուէրներ տուած են հայոց դէմ։

Մասնաւոր անկարգութիւններ, մարդասպանութեան դէպքեր պակաս չեն։ Յիշենք մէկ քանի հատը.—

Նոյեմբ. 27-ի երեկոյին Ալիանս-Ֆրանսէզի կողմէ Տրապիզոնի հայ վարժարաններու համար ղրկուած Տօ. մենիք Վալէրի անուն ուսուցչին տունը կը մտնէ Քէաճ. օղլի Գալիպ անուն սրիկան իր երկու ընկերով. Ֆրանսիացին բացատրութիւն կը պահանջէ՝ թէ ինչու առանց հրաւէրի իր տուն կուգան։ Գալիպ իբր պատասխան այնպէս ուժով կը մտրակէ ուսուցիչը, որ նա թաւագլոր գետին կիյնայ. դեռ ինքզինքը չժողուած՝ ռէվոլվերի փողը ճակտին կը տրի և Գալիպ գուցէ զոհ երթար, եթէ վրայ հասնողներ չաղաչէին ու գործի առաջքը չառնէին։ Կուսակալին բողոքեցաւ, բայց անհետևանք։ Միւս կողմանէ Վալէրի փորձով տեսնելով, որ այդպիսի չարագործներ չպատժուելէ զատ կը պաշտպանուին և հետևաբար ամեն չարութիւն ընելու ազատ են, ուրիշ ձեռնարկներ ընելու վախցաւ։

Յունաց ծննդին քաղաքէս կէս ժամ հեռու գտնուող Խոց գիւղի մէջ հետևեալ դէպքը տեղի ունեցաւ։ Շաթըրօղլու Սելիմ պէյի մէկ աւազակ և սրիկայ որդին Բիզան, քէն ունենալով Խոց յոյներուն դէմ (որոնք անոր մէկ անիրաւ պահանջին բաւականութիւն չէին տուած), արշալոյսին, երբ յոյները եկեղեցիէն սկսած էին ցրուիլ, կերթայ եկեղեցիի դռան մէջ կը կանգնի և ռէվոլվերը ձեռքը՝ „Ձեզ ամենդ ալ պիտ սատկեցնեմ, մի շարժէք տեղերնէդ“ կը պոռայ և ամբողջ երեք ժամ ժողովուրդը ներսը կը պահէ, հայհոյելով հաւատի և այլն դէմ, բնաւ չնայելով լեղապատառ մանուկներու կանչվռտիքին և մահուան սարսուռ զգացող կանանց աղաչանքին։

Գիւղացիք հերոսը ճամբելէ յետոյ բազմաթիւ ստորագրութեամբ բողոք մը տուին մետրապոլիտին։ Այս

ալ վալիին թաքիր մը գրեց, պահանջելով Բիզայի պատժիլը։ Ասոր վրայ վալին հրաման հանեց յանցաւորը ձերբակալել և սակայն իր թէ ամէն ջանք դերև ելան զայն գտնելու։ Արդէն ո՞ր ատեն չարագործ թուրք մը կրցած են շուտով ձեռք անցունել, երբ մանաւանդ դուժողը յոյն կամ հայ մ'է։ Տասը օրէն վերջը Բիզայ քաղաք իջնելով վալիին անձնատուր կը լլլայ. վալին ալ առիթ բռնելով այս ընթացքը աֆ կընէ (կը ներէ)։ Արդէն օր չանցներ որ թուրք նախկին և այժմեան չարագործներ հայրական աֆի չարժանանան պարգևով մը միատեղ։ Կերևի թէ կառավարութիւնը իր ապահովութեան յոյսը դրած է այդ տեսակ անձանց վրայ։ Բիզայ աֆ եղած օրն իսկ թուրք ընկերի մը հետ կուի բռնուելով՝ կը վիրաւորէ զայն կառավարութեան շէնքի մօտ. այս անգամ միայն բանտին արժանի կը համարի։

Բազում այսպիսի օրինակներ կան։ Արդեօք ժողովուրդը ե՞րբ պիտ հասկնայ կատարելապէս թէ՝ սուլթանի կառավարութիւնը բիզաներէ, մուսայներէ աւելի գող, և հարստահարիչ կազմակերպութիւն մ'է և թէ աւելի լաւ է իր ձեռքով գործ տեսնել, քան թէ այդպիսի մարմնի մը վրայ յոյս դնել։ Ամօթ հարիւրաւոր յոյներուն, որոնք փոխանակ անձնական ուժով իրենց պատիւ և գիրենք պաշտպանելու ու այդպիսի փուչ արարածի մը արժանի ընդունելութիւն ընելու, դիմեցին աղաչանքի, պաղատանքի և առ առաւելն սիրտ ըրին բողոքագիր մը տալու։

ՄԱՔՍԱԽՈՅՍՈՒԹԻՒՆ

Մէկ քանի տարիէ ի վեր ծխախոտի մաքսախոյսութիւնն ընդհանուր ծաւալ ստացած է քաղաքիս շրջակայ գիւղերու մէջ։ Բէժիի բռնած հարստահարական ու կեղեքիչ ընթացքը այնչափ նեղը դրին գիւղացիները, որ ամէն վտանգ յանձն առնելով, ծխախոտները մինչև Կարնոյ դաշտը և այլ հեռու տեղեր կը տանեն ծախելու, հաց ճարելու համար։ Թուրք և հայ գիւղացիներ միացած առանձին խմբեր կազմելով՝ կելնեն ճանապարհ։ Իւրաքանչիւր խումբ ունի իւր պետը (բարխանարաշի), որ միշտ էն խմբի քաջ անդամն է։ Շատ անգամ կը պատահի, որ 3-400 ձիաւորներ՝ զինուած մարթինի հրացաններով, ատրճանակներով և սրերով, կը մեկնին մեծ ցոյցեր ընելով։

Վերջին 5 ամիսներու մէջ խմբերը հետզհետէ բազմացան, ստուարացան և սկսան կառավարութեան ու բէժիի վարչութեան դէմ յայտնապէս թշնամական դիրք բռնել։ Կառավարութիւնը վախենալով որ մի գուցէ երկիրը ընդհանուր ապստամբական վիճակ մ'առնէ, առիթ կը փնտռէր զանոնք ջախջախել, նա ալ չուշացաւ։ Հոկտեմբերի սկիզբներ քաղաքէս 12 ժամ հեռու Խամսի-Քէյ կոչուած գիւղի մօտ, պահականոցին քթին տակ անծանօթ աւազակներ կողոպտեցին թաթար բոստասին (ցամաքի փոստ)։ Այն ժամանակն էր, որ մաքսախոյսներն ալ նոր ճամպահ եղած էին։ Կառավարութիւնը այդ տեսակ առիթ մը կը սպասէր։ Անմիջապէս Տրապիզոնէն, Կարնէն, Եըզնկայէն ահագին թուով զօրք հանեց գիւղացիներու վրայ, որոնք ապրանքները ծախելու համար բաժնուած ըլլալով իրարմէ, կրցաւ ծխախոտները վար դնել, մարդիկը ձերբակալել և թշնամի վիճակի մէջ մաս առ մաս փոխադրել Տրապիզոնի բանդը։ Շատեր Կարին բանդին մէջ մեռան, ոմանք ալ ճանապարհին։ Հարիւրաւոր տուներ կործանուեցաւ և տասնեակ անձինք զոհ գնացին, որոնց յանցանքը հաց վաստակելն էր միայն։ Փորձերը սակայն մեղ ըսել կուտան, թէ երբէք դադարելու չէ գիւղացոց քաջակճութիւնը (մաքսախոյսութիւն), մինչև որ իր լուծումը չստանայ։ Ահա մի բերրի և պատրաստ հող ինչպէս թուրք յեղափոխականների համար, այնպէս ալ հայերուս։

Գիւղացիներուն առաջնորդող ոչ ոք կայ, նա ինչ որ կընէ չի հասկնար- միայն սոված չմեռնելու համար է որ կը դիմադրէ բէժիի պետերուն, կառավարութեան զինուորներուն և այս պատճառով նա ստէպ կընկճի։ Կառավարութիւն ազատա՞ծ կը կարծէ արդեօք ինքզինքը տնտեսապէս քայքայեալ ժողովրդի արդար բողոքէն ու զայրոյթէն։

Գալով կողոպտուած փոստայի խնդրոյն ալ համոզում գոյացուցեր է ժողովրդեան ամէն դասակարգերուն մէջ, թէ դա մի յաջող խաղ էր կառավարական մի քանի բարձր պաշտօնեաներու, վանզի գողութիւնը կատարուեցաւ պահականոցի մը մօտ և գողերը ձերբակալելու համար այնչափ շուտ չորս կողմէն հարիւրաւոր ոստիկաններ ճամբայ ելան, որ գողերը թռչուն ըլլային, չէին կարող փախչել։ Այսպիսի կառավարական աշխարայ խեղկատակութիւններ ժողովուրդը դեռ առաջին անգամը չէ որ կը տեսնէ։

ԱՇԱՐԻ ԽՆԴԻՐԸ

Հիմա ալ աշարի (գիւղական արդիւնաբերութեան տասանորդ) խնդիրն է որ սաստկապէս կը յուզէ։ Անցեալ տարի օֆցիները (բոլորն ալ մահմեդական) գովելի քաջութեամբ մը դիմադրեցին միլթէգիներու, կառավարական մամուրներու, թէ կուսակալին և թէ Պոլիս կայսերական պալատ հեռագրով բողոքեցին. սակայն անլսելի մնաց իրենց խնդիրը։ Այն ժամանակ անցան Բաթում և հոնկէ ուղղակի Գերմանիոյ Վիլհէմ կայսեր հեռագրով յայտնեցին իրենց խնդիրը, պաղատելով որ միջնորդէ սուլթանի կառավարութիւն մօտ իրենց աշարի խնդիրը արդարապէս քննելու։ Ադոր վրայ 2 քննիչներ ղրկուեցան Օֆ և գործը անուշ տեղը կապեցին։ Բայց բողոքները սկսած են կրկին տեղալ։ Երկու շաբաթ առաջ 2-300 գիւղացի լեցուեցան Տրապիզոնի կառավարական շէնքը և վալիին բողոքեցին խստիւ աշարի պատճառաւ կատարուած անլուր կեղեքումներու, զեղծումներու մասին։ Վալին տեսնելով վտանգը, խօսքեր շռայլելով գիւղացիները հանդարտեցուց և գէթ այս անգամայ համար զանոնք կրցաւ յետ ճամբել։

Գիւղի մը աշարը (տասանորդը) աճուրդի կը դրուի կառավարութեան կողմէ։ Թուրք վաշխառուները անմիջապէս վրայ կը թափին և իրար մէջ մրցում բանալով՝ բարձր գներով մին կամ միւսը վրան կառնէ։ Ալ հա-

գասը չէ, որ դիմանք զրաղուած են նրա վիճակով, բայց ՝ յուլթեան համար անհրաժեշտ պայմաններ են, որովհետ-

ըուստ է նա. 10 հազար ղրուշի առած աշարը 40-50 հազարի կը բարդէ գիւղացոց վրայ։ Եւ վա՜յ բողոքողին կամ չվճարողին, իսկոյն բանդ և ինչ որ ունի՝ կով, եզ, ոչխար իսկոյն աճուրդի դրւելով՝ աշարի գինը կառնեն։

Այս տեսակ պայմաններու տակ ապրող ժողովուրդ մը ո՞ւր պիտի դիմէ... դժւար չէ գուշակել։

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՆ ԳԻՐ

Բարձր դուռը, տեսնելով, որ պաշտօնական զեկուցումները, հելբումները ծիծաղի միայն կարժանանան, հրահանգ տւաւ կուսակալներուն Հայոցմէ շնորհակալութեան գրեր առնել, որպէսզի պէտք եղած ժամանակ իր սուտերուն իբր փաստ գործածէ զանոնք։ Էտերնէի առաջնորդ վատահոգի և գծուծ Մեսր. եպ. Սուքեասեանի և իր արբանեակներու շնորհակալութեան հանրագրի պարունակութիւնը Պոլսոյ թերթերու մէջ հրատարակւեցաւ իբր կարևորագոյն փաստ մը Հայոց հպատակասիրական զգացմանց և Թիւրքիայի մէջ տիրող անդորրութեան։

Մի քանի օրէ ի վեր շշուկ կար, թէ Տրապիզոնի մէջ ալ նոյն օրինակ գրեր պիտի պատրաստուին կառավարութեան պահանջմամբ։ Բայց կերևի թէ գործնական չի նկատւիր Տրապիզոնի պէս քաղաքի մէջ բռնի ստորագրութիւն ժողւել հանրագրի համար և յարմար կը տեսնւի սուլթանի ծննդեան տարեդարձի օր (յուն. 30) շնորհաւորական հեռագիր մը ստորագրել տալ թուրք պաշտօնեաներու, էֆէնտիներու, յունաց, հայոց և հայ կաթոլիկներու առաջնորդներու և քրիստոնեայ վաճառական դասուն։ Հեռագիրը կը պատրաստւի գրեթէ սա իմաստով. „Ձեր ամենաբարեբաստիկ և երջանկաբեր ծննդեան շնորհաբեր տարեդարձին առթիւ համայն Տրապիզոնի ժողովրդեան ի դիմաց խայտալով կը մատուցանենք յոտս Ձեր Բարձր և Աստուածատուր Գահուն մեր ամենահպատակասիրական զգացումները և կը մաղթենք, որ Երկնաւորն Ձեր Վեհափառութեան երկար տարիներ կեանք պարգևէ և Ձեր սբ. իշխանութիւնը հազարաւոր տարիներ անսասան պահէ, որուն հովանւոյն ներքև կարենանք միշտ վայելել այսպիսի երջանիկ, չքնաղ և նախանձելի վիճակի մը ամեն պարգևները։“

Կուսակալին կողմէ ստորագրելու առաջարկ հաշւի չէր գար. թուրքերը ստորագրելէն վերջը, Նէմլի օղլի կոչւած թուրք դրամատէր-վաշխառու վաճառականական տունը քրիստոնեաներու ստորագրել տալու գործը վրան կառնէ. նրա հրաւէրով կը ստորագրեն յունաց առաջնորդը, հայ կաթոլիկաց առաջնորդական փոխանորդ վարդապետը և բաւական թւով յոյն հարուստներ. հայ հարուստներէն տխմարաբար ստորագրութիւն կուտան Կայծակ Արապեան և Աբիսողոմ Տիրատուրեան։ Երեկ, յունւար 30-ին ստորագրութեան առաջարկ կը լլայ նաև հայոց առաջնորդ Եղիշէ վրդ. Այվազեանին որը, կշռելով իր առջև բանալիք անդունդը, աչքի առջև ունենալով Տրապիզոնի հայ ժողովրդեան իր դէմ ունենալիք ատելութիւնը և զայրոյթը, առաջին վարանումէն յետոյ խոհեմութիւն ունեցաւ մերժողական պատասխան տալու, ըսելով, թէ թէև ինք ալ կը փափագի այդ բանին, բայց արդէն այդ նպատակով շնորհաւորական այցելութիւն տւած է կուսակալին և թէ օրէնք է, որ առաջնորդներ իրաւունք չունեն վեհ. կայսեր հետ յարաբերութեան մտնել, այդ միայն կարող է ընել Պոլսոյ հայոց պատրիարքը։

Հարկ չկայ ըսելու, թէ վալի պէյը, Նէմլի օղլիներ և այլ կառավարական շուներ կատղեցան փրփրեցան առաջնորդին դէմ, հայերուն դէմ։ Միւս կողմանէ հայ ժողովուրդն ալ սկսաւ առաջնորդարանի այս ընթացքէն ուրախանալ, հրճւիլ և խումբ խումբ երիտասարդներ, արհեստաւորներ առաջնորդին գնացին շնորհաւորելու իր արած քայլին համար, որ ժողովրդեան պահանջն էր։

Պատրաստւած հեռագիրը ղրկւեցաւ սուլթանին։

ՕՐ ՆՈՐ, ԴԷՊՔ ՆՈՐ

Տրապիզոնէն 3 ժամ հեռու գտնւող Անիճա գիւղը կիրակի օր, յունւար 29-ին, ժամը 3-ի մօտ կերթան միւլթէզիմ Բօլատ օղլի Հէլիմ էֆէնտիի հրամանաւ իր ծառայութեան տակ գտնւող զօրճի մը և կառավարական զապթիէ մը ուղղակի Տէլիպալթեայեան Զատիկ անձին տունը և անոր 20 ղրուշ տասանորդի տուրքէն մնացած պարտքը կը պահանջեն։ Զատիկ բացակայ ըլլալով, եղբայրը Գրիգոր կը պատասխանէ՝ թէ ինք նոր եկած է գիւղ, հաշւէ տեղեկութիւն չունի, Զատիկ տուն եկածին պէս ստակը կառնէ, կը բերէ։ Այս պատասխանին վրայ շնորհալի պաշտօնեաները կսկսին աղտոտ հայհոյանքներ թափել և մարթինի հրացանի կոթով Գրիգորը ծեծել անխնայ։ Գրիգորի արձակած վայոցներէն հօրեղբօր որդոյն՝ Յովհաննէսի կինը՝ Ագապի իր տունէն դուրս կը վազէ և աղաչանքներով կուզէ Գրիգորը զապթիէի ձեռքէն առնել։ Վայրենի զապթիէն մի քանի հրացանի կոթի փառաւոր հարւածներ ալ անոր բաժին կը հանէ և գետին կը փռէ զայն։ Քիչ վերջը Ագապիին ամուսինը՝ Յովհաննէս Տէլիպալթեայեան կուգայ կուղն վայրը, աղաչանքով զապթիէի ձեռքէն կազատէ Գրիգորը և խօսք կուտայ, որ Զատիկ տուն գալով ստակը անպասաճառ կը բերէ։ Կատղած պաշտօնեաները կը հեռանան։

Այս դէպքէն 1 ժամ յետոյ Յովհաննէս մօտակայ Մունտա գիւղի մէջ գտնւող խանութէն կաղ առնելու կերթայ։ Այդ խանթին մօտերը հաստատւած է նաև միւլթէզիմ Հէլիմ էֆէնտի, ուրկէ իր մարդիկը կարձակէ գիւղացիներու արիւնը ծծելու համար։ Հազիւ թէ Յովհաննէս խանթէն ներս մտած էր, երբ Անիճա գիւղը գնացող զապթիէն մի քանի քայլ հեռուէն կերեւայ և մարթինի հրացանը նշան առնելով՝ Յովհաննէսի կուրծքին կը պարպէ. գնտակը կը կպչի ձախ ազդրին վեր մասը և ծակելով դուրս կելնէ։ Զափթիէն տեսնելով, որ հարւածը ճիշտ տեղը չդպաւ և մահացու չէ, կը պատրաստւի անգամ ալ պարպելու, երբ խանթին տէրը Փէթիհ օղլի Հիւսէին և ուրիշ թուրքեր կարգելեն և հրացանը ձեռքէն կառնեն։

Անիֆա լուր կերթայ և վիրաւորը արիւնլայ վիճակի մէջ նոյն օր քաղաք կիջեցնեն նախ առաջնորդարան և ապա կառավարատուն կը տանեն։ Աղերսագիր ալ տուին թէ կառավարութեան և թէ առաջնորդարանի։

Անիֆա գիւղացի Տէլիպալթայեան Յովհաննէսը վիրաւորող զապթիէն գիւղացիներէ բռնելով բերեցաւ կառավարութեան յանձնուեցաւ։ Ամէն մարդ, գազան զապթիէին թելադրիչը, միւլթէզիմ արիւնաքամ Բօլար օղլի Հէլիմ էֆէնտին է կը փաստաբանէ։ Բայց Հէլիմ էֆէնտիին հո՞գն է. չէ՞ մի որ կառավարութիւնը յայտնի կերպով ըսած է իրեն՝ տուր ինձի այսչափ ղրուշ, և առ քեզի գիւղացիները, ինչ կուզես ըրէ. մէկին տեղը 50, 60 պահանջէ, քեզ ընդդիմացողին ես կը պատժեմ, քու ղոչճիներուդ կը կցեմ նաև իմ քաջամարտիկ զապթիաներս, չէ՞ մի որ արդէն կառավարութիւնը կազմող պաշտօնեաներն ալ իր նախկին կամ ներկայ ընկերներն են և մանաւանդ որ իր եղբայրն ալ Տրապիզոնի կառավարութեան մէջ ազդեցիկ պաշտօնի գլուխ կը գտնուի. ո՞վ պիտի բողոքէ իր դէմ, ո՞վ իր անհամար չարագործութիւնները, զեղծումները երևան պիտի հանէ, ո՞վ պիտի դիմադրէ իր վաւաշոտ կրքերուն. գիւղացինե՞ր, միթէ անոնք ալ մարդ ե՞ն, կը զգա՞ն, կը հասկնա՞ն, մի՞թէ անոնք կառավարութեան, վաշխառուներու, միւլթէզիմներու համար աշխարհ եկած չեն. ի՞նչ կարժէ անոնց մի թոյլ բողոքը կամ դիմադրութիւնը, (այն ալ եթէ ընէն) իսկոյն մի խումբ զինուոր, մէկ երկու սէրնի հարուած, մէկ քանի հատ մարթինի գնտակ, լմնցաւ գնաց։

Տէլիպալթայեանք բողոքագիր կուտան վալիին. վալին հէվալէ կընէ Ալայ պէյին, նա ալ կը կարդայ զայն և բարկութեամբ կը պոռայ գիւղացիներուն՝ „կորսուեցէք դուրս, թող վիրաւորը աղէկնայ որ հարցաքննութիւն սկսինք“։ Մինքերնին է վիրաւորը աղէկնալէն վերջը դատը սկսել, որպէս զի կամ ազատ արձակեն զապթիէն կամ թեթև պատիժ մը տան։

Զապթիէն անշուշտ իր տեղը կը գտնէ։ Ի հարկէ Հէլիմ էֆէնտի ալ, որ զապթիէն հրահանգողն ինքն էր, մի քանի կլորիկ ոսկի կը պատրաստէ վալիին համար. կառավարութիւնն ալ յանցանքը հային վրայ կը ձգէ անշուշտ։

Արդարութիւն, ապահովութիւն... կրկին առակ լըսարուք։

ԲԱՆՏԱՐԿԵԱԼՆԵՐ

Սուլթանի ծննդեան տարեդարձի օրը յունուար 30-ին Սամսունէն Տրապիզոնի խաւար բանդը փոխադրուած հայ բանդարկեալներն են՝ 1. Զարշամբայի Մարթիլ գիւղէն տ. Թաթուլ քահանայ Կարմիրեան 33 տարեկան, 2. Իւնայի Քէօքլուկ գիւղէն տ. Միքայել քահանայ Թահմազեան 45 տարեկան, 3. Կ. Պոլսեցի հաճի Պետրոս Գազանճեան 40 տարեկան, 4. Զարշամբայ քաղաքացի Ֆէրտինանդ Արզումանեան 13 տարեկան, 5. Զարշամպայի Թէքիւր գիւղացի Դաւիթ Գարաստեփանեան 85 տարեկան, 6. Զարշամպայի Մարթիլ գիւղացի Մարտիրոս Օհանեան 20 տարեկան, 7. Նոյն տեղէն Գալուստ Զաքրեան 48 տարեկան, 8. Իւնացի Քէօքլուկ գիւղացի Կիրակոս Թահմազեան 48 տարեկան, 9. Նոյն տեղէն գիւղացի Գրիգոր Թահմազեան 41 տարեկան, 10. Նոյն տեղէն գիւղացի Սահակ Թահմազեան 28 տարեկան։

Ասոնցմէ զատ Սամսոնի բանտը կը մնան 8 անձեր ալ, որոնցմէ մին դպրոցի հոգաբարձութեան գանձապետն ըլլալով ձերբակալուած է, իբր գանձապետ... խռովարարներու կոմիտէին։

Իւնայի մէջ նոր ձերբակալութիւն պատահած է։

Դեկտ. 29 ազատ արձակուած 12 բանտարկեալներէն մին՝ Կարապետ Տոմպալաքեան Հէրեկցի 70 տարեկան խեղճ ծերունին դեռ բանտը պահած են և չեն թողուր, որ մեկնի. կերևի թէ մարդուն քով քիչ մը ստակ կայ, այն ալ կուզեն կորզել։

*
* *

ՆԱՄԱԿ ԵՐԶՆԿԱՑԻ

Երզնկայի Միւշիր Զէքի փաշան սուլթանի աչքին կրկին անգամ գործունեայ երևալու համար, Պոլսէն եկած հրամանի մը վրայ, յունվար 28 հրաւիրուած է ելեր քաղաքին երևելիները հացկերոյթի, նպատակ ունենալով „շնորհակալութեան գիր“ առնել անոնցմէ։ Դեռ հացկերոյթի չգնացած հրաւիրեալներ մէկ մէկ սպառնական գիր ստացեր են ժողովրդին կողմէ, ներկայանալիք շնորհակալութեան գիրը չստորագրելու համար։ Քաղաքը մեծ յուզման մէջ է։

Հայ ժողովրդի յուզման վրայ Միւշիր փաշան, տեսնելով որ իր ընելիք խայտառակ գործը կատարելապէս պիտի խայտառակի, խոհեմութիւն համարեր է այդ ստորագրութեան գործը յարմար առթի մը ձգել և հրաւիրեալներուն իմացուցեր է թէ հացկերոյթը յետաձգուած է։

Թէ կառավարութիւնը և թէ թուրք կոյր ամբոխը, նոյն կառավարութեան դրդմամբ, այս խնդրի առթով իր թշնամութեան չափը աւելցուցեր են։ Հայոց դէմ տուրքերու համար անլուր խստութիւններ գործ կը դնեն։ Զինուորներուն և թուրք սրիկաներուն փամփուշտ կը բաշխուի։ Քաղաքին ու շրջակայից մէջ գրգռումը չափազանց է։ Հայերը շատ անապահով դրութեան մէջ կը գտնուին։

Տխմա՞ր կառավարութիւն, ի՞նչ ընելը չգիտեր իր փտած մարմինը ծածկելու համար։

Ինչպէս կիմանանք, վերջերս Բաղէշի մէջ հայոց և կառավարութեան միջև ընդհարումներ պատահեր են։ Հայոց կրպակները զինուորներէն ու քրդերէն թալանուեր են։ Հայոցմէ բանտարկութիւններ եղած են։

*
* *

ՆԱՄԱԿ ԵՕԶՂԱՏԻՑ

Լաւ գիտէք, որ ընկճուած, հարստահարուած ու գրեթէ կործանած ենք. կառավարութեան ընթացքը և թուրք

գասը չէ՞, որ դրանք զբաղու

հասարակութեան ոխակալութիւնը, հայատեցութիւնը ամեն բան տակն ու վրայ ըրած, ապահովութիւնը վերուցած, միանգամայն առևտրական վարկը դագրած է. Գիւղացին կը լլկի չարաչար, քաղաքացին կանարգի կատաղաբար. բազում ծնողք ձեռնածալ—ու միայն ցուրտ և անկարեկիր երկնից հանդէպ ձեռնատարած — կուլ կուտան իրենց աղեխորով արցունքը։ Անդին զաւակը՝ հոգոյն հատորը ու ամբողջ էութիւնը, ճիտը ծուռ հօրը պէքին, հօրը ձեռքին կը նայի կտոր մը հացի, պատառ մ'ուտելիքի համար։ Անդին նորատև ու հուժկու, հաւատարիմ ու գործունեայ երիտասարդն շնչասպառ կը թափառի ի խնդիր գործի.... ու հառաչակոծ կը հոլովէ իւր օրերն տրտմալի։ Անոնք, որ դրամ ունին, գուլթ ու շնորհ չունին գրեթէ՝ ա՛լ դուք մտածեցէք որբերուն, այրիներուն, ծերերուն անկարներուն վիճակը։ Զէ՛, բարեկամ, եթէ բարերար ձեռքեր չփութան և չը նեռեն ողորմութեան նաքարակետը Եօզկատի հայոց պարզած ձորձին վրայ, պիտի մեռնինք անիծելով ճակատագիրը, անիծելով անկարեկիրը...

Ասուած գիտէ միայն, թէ ի՞նչ սև խորհուրդներ, ի՞նչ սև երկիւղներ պաշարած են նոցա միտքն ու սիրտ...

* *

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՄԱՄՈՒԼ

Եւրոպական մամուլը վերջերումս համեմատաբար աւելի թոյլ էր զբաղուում հայկական հարցով, երբ անգլիական «Դէյլի Տէլիգրաֆ» թերթի մէջ սկսեցին երեւան գալ նոր ցնցող յօդուածներ։ Այդ թերթի թղթակիցը միակն է եւրոպական թղթակիցներից, որ կարողացաւ մուտք գործել կոտորածի տեղը եւ իր աչքով տեսնել, իր ականջով լսել այն բոլոր գազանութիւնները, որոնց մասին վաղուց հաղորդում էին հայ թերթերը։ Այդ թղթակցութիւններն ահագին տպաւորութիւն են թողնում հասարակական կարծիքի վրայ։ Իսկ մինչդեռ, միւս կողմից, սուլթանի յուսահատ, ողորմելի կառավարութիւնը ժողովրդի կաշուից քերթած անագին գումարներով կաշառում է ամեն ինչ վարձու տալող թերթեր ու իրենց խիղճը վաճառող անհատներ, յոյս ունենալով դրանով յօդուտ իրեն փոխել հասարակական կարծիքը եւ լռանալ իր արիւնոտ ձեռքերը։

* *

ՔՈՅՐԵՐ ԵՒ ԵՂԲԱՅՐՆԵՐ

(Թղթակցութիւն Ք.-ից)

Այսօր Հայաստանի սրտի մէջ՝ սուլթան Համիտէի հրամանօք եւ քիւրդ «Համիդիէի» ձեռօք կատարուող սոսկալի արիւնհեղութիւնները, քստմնելի դէպքերն ու անասելի բռնութիւնները այլ եւս ֆանտազիայի երեւակայութեան ծընունդ կամ արդարութիւն չեն, ինչպէս որ կամենում էիք կարծել մի ժամանակ, երբ դեռ դանակը ոսկրին չէր հասել եւ տասնեակ հազար հայի տարապարա արիւնով հայրենի լեռներն ու դաշտեր չէին ողողել.... Ձեր առաջ դրած են այսօր չարաբաստիկ, բայց խօսուն իրողութիւններն ու փաստերը. դուք ականատես եւ ականջալուր էք այսօր թէ ինչպիսի բուռն կատաղութեամբ, ինչպիսի ինկվիզիցիական անգթութեամբ սրածուում է թշուառ եւ անպաշտպան ժողովուրդը. թէ ինչպիսի անասնական գարշ լրբութեամբ առարգուում է տարաբաղդ հայի ընտանեկան սրբութիւնն ու պատիւը. հայ օրիորդներին եւ մանուկներին ջոլիր ջոլիր քշում են բուն Թիւրքիա բռնաբարելու եւ խալամութեան վերածելու..... Հայ կնոջ ստինքներն ու մարմնի միւս մասերը տէգերի ծայրերին բարձրացրած՝ անզգամ բաշիբուզուկի եւ լիրբ քիւրդի հրճուանքի առարկայ է դառնում։ Պատուասէր հայ կանայք, որոնց նմանը մենք տեսնում ենք միայն հինգերորդ դարում, աղգային մեծ պատերազմի ժամանակ, իւրաքանչիւր պատիւը յաւիտենական կորստեան մէջ են օրանում եւ կամ մեռնում զէնքը ձեռքերին, թշնամու դիակներ տապալելով, կամ իւրեանց սիրելի մանկիկները գրկերին՝ խմբերով թափուում են ծիլ-ծիլ ժայռերից դէպի խորունկ, անդառնալի անդունդը եւ այդպէս՝ անսիրտ բռնակալի զարմացքը, կատաղութիւնն ու յուսահատութիւնն են շարժում...

Սուլթանի կառավարութիւնը ճիգ է թափում մի վարկեան առաջ սպառել հայկական չունչը իր երկրի երեսից, մոխիր դարձնել, ամայացնել Հայաստան՝ բարեբեր եւ անանման աշխարհը իր խաղաղ շինականներով... այդ դեռ բաւական չէ. մեր հարազատները կոտորուում են նաեւ քաղցից ու սովից. նրանց պակասում է չոր եւ ցամաք հացը՝ գէթ քաղց տալու իրենց գոյութիւնը հերոսական մահով մեռնելու համար։

Բուն հայաստանցու համար այսօր մահու եւ կենաց հրդեհաժամ է. նա իր պղտոր եւ արիւնաներկ աչքերը սեւեռած ձեր երեսին, աղերսում է ձեր կարող աջակցութիւնը, ձեր կարեւոր օգնութիւնը, եւ այդ կայանում է ձեր սեղանից աւելացած փշրանքների... ձեր կոպէկներով գնած՝ մի քանիսի ամփուշտի մէջ միայն... Նայեցէ՛ք այն կողմ՝ Սասուն եւ Տարօն, այնտեղ ձեր ապագայ բարօրութեան համար արեան գետեր են հոսում եւ դիակի բլուրներ կուտակուում. եւ մի՞թէ դուք այնքան անսիրտ, անգութ եւ տմարդի պիտի լինիք, որ զլանաք ձեր ժանգոտ կոպէկներով օգնել ձեր հարազատներին այն կրիտիքական վայրկենին, երբ նրանք իրենց թանկագին արիւնով ճիպն են թափում ազատելու հայրենի երկիրը սուլթանի բարբարոսութիւնից եւ ապագայ սերնդի առջեւ հարթելու բաղդաւորութեան ուղին...

Նախատի՞նք, եթէ պարտազանց լինիք, եթէ այժմ էլ անհոգ եւ անտարբեր մնաք...

Նուիրատուութիւնների ցուցակը.—

Ռ.-ից 1000ր. Քութ.-ից 110ր. „Հայկաշէն“ գիւղից 100ր. Աբ.-ից 100ր. Ղբիմի № քաղ.-ից 400ր. Զաք. ք.-ից տիկ. Ս. և օր. № ի միջ. 55ր. Զաք. ք.-ի հասարակ.-ից 78ր. Թէլ.-ից 100ր. Ալոյց.-ից 200ր. „Ադամ“-ից 185ր. „Կայծիկ“-ից 76ր. 19կ. Գզ.-ք. „Հայկ“-ից 110ր. Խ. Ռ. գրպպ.-ից 26ր. „Լարիջան“-ից մի խումբ հայրենակ.-ից 127ր. Ուս. Մ. Ա.-ից 90 ֆր. Ռում. Ռուխարեստ քղ. դեղագործ Մարկովիչից 60 ֆր. Լովէլ քղ. Մ. Մխ. 1 դօլ., Ֆիլ. քղ. Ե. Բարկ. 1 դօլ., Նէվտ. քղ. Ե. Կիր. 2 դօլ., Ր. Ռ.-ից 3 ր. Բօլղ. Իսլիմայ քղ.-ից Խաչիկից 3 նապ. ոսկի, տիկ. Ակիլինայից 1 ոսկի։ Ուսանողական մի երեկոյթից յօգուտ սասունցիներին 300 ֆր.

„Հնչակից“ երբորդ անգամ ենք պահանջում կատարել իր խոստացած սպառնալիքը։

Մեզ դիմողներին խնդրում ենք պարզ և որոշ գրել իրենց հասցէները։

Դաշնակցութեան անծանօթներից խնդրում է թղթակցութեան և նուիրատուութեան համար դիմել.
L. Boole, 15, Augustus Rd. Hammersmith, W. London.

Վիեննա. Դաշնակցութեան ազատ տպարան